զով միայն յիշելով ժամանակագրողն, կ'ըսէ, թէ այդ բանդ գրուած «կայ ի գրիս յառաջագոյն». եւս և, «որպէս և գրեալ կայ ի գրին այս «առաջագոյն»։ Ուրեմն անտարակոյս կորսուած է Տարեգրոցս առաջին մասն, որոյ թերեւս վերնագիր կըրնայ ըլլալ այս երկտող բանս, որ Բարիզու մեծ գրատան հայերէն ձեռագրաց մէկուն մէջ գրուած է առանձինն. «Յիշելիք կանուխ ժամանակաց, ապագայիցս ձեռագրութեամբ, յաղագս գա» ւառապետաց, այսինքն Պարոնաց Մոլտաւու երկրիս». նոյն բանս լատինարէն այլ թարգմանուած գրուած է։ Այս գրոցս (յորմէ շատ բան քաղած է մեր վերոյիշեալ Հայրն Բժշկեան), հիմայ մնացեալ մասին տարեգրութիւնն կանոնաւոր կարգով կու սկսի 1560 տարիէն, բայց ընդհատօրէն՝ անկէ դար մի և աւելի առաջ՝ ինչուան 1430էն, կարճ կարճ, և անշուշտ հնագոյն գրուածներէ հաւաքելով, և ոչ միշտ ուղիղ ժամանակի կարգով, այլ յետ և առաջ ցրուած. զորս մենք տեղափոխելով շարակարգեմք ըստ յաջորդութեան տարէթուոց։ Գրոցս մասին նորագոյն օրինակ մ'այլ կայ ի գրատան Բարիզու, յորում քանի մի հնագոյն՝ բայց ոչ նշանաւոր ազգային յիշատակք այլ կան, որ չեն վերաբերիր մեր գաղթականաց։ Տարէգիրքս, զոր հրատարակեմք ի խնդրոյ վերոյիշեալ ազգասէր գիտնականի Պր. Գրիգորի, թէ և հասարակօրէն Լեհահայոց յիշատակաց է, քիչ մ'այլ Մոլտաւեանց, այլ յատկապէս Կամենից քաղաքի, որոյ վրայօք կարեւոր տեղեկութիւն կըրնան գտնել փափագողք՝ ի վերոյիշեալ Ճանապարհորդութեան Բժշկեան Հօր, և առաւել եւս զուարճալի՝ թէ՝ քաղքին և թէ իր պաշտպան՝ Հայոց եկեղեցւոյն մէջ պատուեալ հրաշագործ Տիրամօր պատկերին, ի նորատիպ (1895) Ճանապարհորդութեան + Հ. Քերովբէի Քուշնէրեան։

Տարէգրոցս հեղինակք են հայ աւագերէցք. նախ, Տէր Յովհաննէս, 1560էն մինչեւ ի 1610, յորում վախճաներ է, 84 տարուան, 56 տարի քահանայութիւն ընելով, որոյ 29 տարին այլ աւագերիցութիւն, ինչպէս ինքնին յիշէ տեղ մի (յամի 1597). գրուածն ցուցընէ որ ոչ միայն լեզուին բաւական հըմուտ է, այլ և նախնեաց գրուածոց և ազգին պատմութեան։ Կենաց եռքի տարիներուն (1605–10) յիշատակներն՝ երեւի գրած իր որդին և յաջորդն՝ Տէր Գրիգոր աւագերէց։ Բայց սա յետ մահուան հօրն՝ (մեզ ոչ հասելի) թաթար կամ թանձր թուրք լեզուաւ շարունակէ զտարէգիրսն՝ մինչեւ ի 1616, նոյնպէս այլ իր որդիքն Տէր Օքսենտ և Տէր Յակոբ (+ 1629) մինչեւ ի 1624[1]։ Այսպէս ըրած են այդ Լեհահայքդ իրենց դատաստանական գրուածոց եւս, որոց 30 մեծ հատորէն աւելի՝ հիմայ պահուին Քիեւի դիւանաց մէջ. առաջին քիչ տարիներու գործերն՝ հայերէն, վերջի մեծ մասն՝ թաթարերէն։

Լեզուին օտարութեանն և հասարակաց անհասկանալի ըլլալուն պատճա-

1 Տէր Յովհաննէս յիշէ իր մէկ քահանայ որդին այլ, Տէր Միքայէլ (+ 1592). սորա որդին այլ Յակոբ տարկաւագ (+ 1609). մէկ աշխարհիկ որդի (Տէր Յովհաննու) այլ յիշուի՝ Վարդերես անուն։ Այս գրքէս դուրս յիշատակուած է Տէր Գրիգոր ի Ճանապարհորդ. Լեհատանի (էր. 158)։